ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է «Կառուցապատման իրավունքի դադարումը» վերտառությամբ 204.3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Կառուցապատման իրավունքը դադարում է *սեփականատիրոջ և կառուցապատման* իրավունք ունեցող անձի համընկնելու դեպքում:»:

Նախագծով, սակայն, սահմանված չէ «կառուցապատող» հասկացությունը, ինչը կարող է տարաբնույթ մեկնաբանությունների պատճառ դառնալ և հակասության մեջ մտնել այլ իրավական ակտի կարգավորումների հետ: Մասնավորապես, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող* կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես *կառուցապատող*: Նշված հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ գույքի սեփականատերը կարող է հանդես գալ նաև որպես կառուցապատող, մինչդեռ Նախագծի համաձայն՝ սեփականատիրոջ և կառուցապատման իրավունք ունեցող անձի համընկնելու դեպքում կառուցապատման իրավունքը դադարում է:

Ուստի, իրավական ակտերի միջև հակասություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ:

2. Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում են կառուցապատման իրավունքի դադարեցման հիմքերը: Այնուամենայնիվ, նույն հոդվածում նախատեսված չէ կառուցապատման դադարեցում՝ կառուցապատման իրավունք ունեցող անձի պահանջով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքի վրա (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 3), առաջարկում ենք քննարկել կառուցապատման իրավունքի դադարեցման

[1] Այսուհետ՝ Նախագիծ

հիմքերի շարքում կառուցապատման իրավունք ունեցող անձի պահանջը ներառելու հարցը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ